

բայց 'ի զուր • վասն զի երթալով վար կ'իջնար , որով հարկ եղաւ նաւակներուն անիւներն , անուորդները ու աթոռներն ալ լիճընետելու իրենք չուան ներուն պլլուելով վերի ապաստանարանը ելան : Բայց նոյն ատեն նաւակը անանկ ուժով ալեաց զարնուեցաւ , որ մազ մնաց որ ամէնքը մէկէն ծով թափէին • բաղդերնին բանեցաւ և ահա նոյն միջոցին նաւակները նորէն շտկուելով իրենց հաւասարակշռութիւնը գրտան , որով օգապարիկը սկսաւ կանոնաւորեալ կերպով առաջ երթալ՝ բայց միշտ ջրին քսուելով՝ ու վայրկենի մէջ երկու մղոն տեղ կը կտրէր , որ խելքէ դուրս արագութիւն ըսել է : Բայց միջոցին ցամաքէն շոգենաւ մը ամենայն արագութեամբ սկսաւ դէպ 'ի իրենց մօտենալ որ զիրենք ջրակուլ ըլլալէն կարենայ խալըսել • բայց օգապարիկը շոգենաւին առջևէն կրակի պէս սահելով անցաւ , և ահա քիչ մը ետքը ցամաքի վրայ գտնուեցաւ օգապարիկը : Բայց հոս ալ ուրիշ նորանոր վտանգներու մէջ կը գտնուէին անտառի մը կամ ուրիշ բանի զարնուելով խորտակելու : Բնօգուտ տեղը խարխիսիւր ձգած կը ջանային օգապար գունտը կեցընել , մինչդեռ քամին փետրոյ մը պէս զիրենք կը քէր կը տանէր , և վերջապէս անտառախիտ տեղ մը տարաւ ձգեց , ուր որ ահագին ուժգնութեամբ ծառերը տատանելով զիրենք կը սարսափեցընէին • բայց մէյմը որ ծառերուն պլլուեցան օգապարիկին չուանները՝ մէկ կողմանէ խարխիսին ծանրութիւնը և մէկալ կողմանէ ծառերուն բռնութիւնը վար քաշեցին բոլորովին գունտը և բոլորը մէկէն ծառերուն ճիւղերէն կախուեցան մնացին :

Գունտը պատառ պատառ եղաւ • կազն ալ ահագին ճայթ մամբ օդուն մէջը ցրուեցաւ , ու մեր օգաչու ճանապարհորդներն ալ բարձր կաղամախի մը ծառին վրայ կախուած մնացին , գետնէն երեսուն ոտք բարձրութեամբ , առանց գիտնալու թէ ետքերնին ուր պիտի երթայ : Այբոր առաջին ահա-

բեկութիւննին անցաւ՝ ու զեցին կամաց կամաց ծառէն վար իջնալ , որն որ առանց փասու մը կատարուեցաւ , և միայն մէջերնէն մէկը ծառէն վար իջնալու ատեն ամենաթեթեւ կերպով մը փասուեցաւ :

Մէկէն մերձակայ տեղերուն բնակիչները մեծաւ ուրախութեամբ եկան զիրենք ընդունելու , և հանդիսով մօտիկ աւանը տարին : Ս . Սուրբովիկոսէն ելլելէն ինչուան հոն վար իջնալնին տասնըութը կէս ժամ տւեր էր , և այսչափ ատենուան մէջ 1,150 մղոն տեղ քալեր էին : Շոգեկառք մը այսչափ տեղ քալելու համար երեսունըութը ժամ պէտք է որ դնէ : Բայց եղած փորձով կ'ուզեն հաստատել օգաչնաց ճանապարհորդները , թէ երկուսուկէս օր բաւական է Սիկիանոսը անցնելու համար յաջող քամիով :

**Սրտին ցաւէն հիշանդացած ձի մը :**

Յայտնի ու ծանօթ է ամենուն ձիոց կարգէ դուրս ունեցած զգայականութիւնը եթէ իրենց տիրոջը վրայ ըլլայ , և եթէ իրենց ընկերներուն նկատմամբ՝ որոնց հետ որ ընկերակցութեամբ երկայն ատեն կեցած ըլլան : Բսածներուս հաւաստիք ու միանգամայն զարմանալի օրինակ մը կրնայ սեպուիլ այս հետեւեալ դէպքս , որ մօտերս Բարիզու մէջ հանդիպեցաւ :

Չիավաճառ մը Գանի տօնավաճառէն մատակ ձի մը գնելով ուրիշ ընկերով մը Ս . Վերմանոս բերաւ , ու հոն ուրիշի մը ծախեց մատակ ձին իր ընկերոջմէն բաժնելով : Բայ ձին ընկերոջմէն բաժնուելու ատեն մեծ դժուարութի ջրցուց , և երկայն ատեն ետին դարձած ուշադրութեամբ անոր վրայ կը նայէր մինչև որ աչքէն բոլորովին անհետացաւ : Ս . Վերմանոսի ճամբուն ամբողջ երկայնութեանը միջոց՝ գնողը ուրիշ մասնաւոր այլայլութեան նշան մը չտեսաւ ձիուն կերպին կամ քալե-

լուն վրայ : Արեկոյեան դէմ Ռարիզ հասնելով ուրիշ ձիերու հետ մէկտեղ ախոռ դրուեցաւ : Չին մինչև երկրորդ օրը տխուր ու լքեալ կերպով մը կեցած՝ ամենեւին կերակուրին քով չմօտեցաւ , թէպէտև քանի որ մէկալ ձիոց հետ մէկտեղ էր ամենեւին կատաղութեան նշան մը չցրցուց , ու երբեմն երբեմն ոտքերը գետին կը զարնէր միայն :

Արկորդ օրը , երբոր մէկալ ձիերը աշխատութեան տարուեցան ու ինքը մինակ մնաց , իր թմբութենէն արթննալով սաստիկ կատաղութիւն մը վրան եկաւ , աչքերը կրակ կտրեցան և դէմքն ալ այլայլեցաւ , ու խրինջալով և բարկութեամբ ոտքերը գետին կը զարնէր : Տանկարծ ակընթարթի մը մէջ անանկ սաստիկութեամբ ծնկուրներուն վրայ գետին ինկաւ որ ոտուրները փնտրուեցան . վերջը նորէն ոտք ելլելով քիչ մը հանդարտեցաւ : Ըն ատեն առջևը խոտ դրին՝ բայց չկերաւ ու մերժեց , և նորէն կատղեցաւ , և սաստիկ անձկութեան մը մէջ կը տեսնուէր . առջևի յարդը կատաղութեամբ մը ակուաներովը ծառիէն ետև նորէն դուրս կը հանէր . անանկ ուժով կը խածատէր իր մարմինը որ կաշին սկըլթելով արիւն լլայ կ'ըլլար . աս կերպով մերթ կը հանդարտէր ու մերթ կը կատղէր . սա կայն վերջապէս արիւն քրտինք մտած կարողութենէ իյնալով կիսամեռ ինկաւ մնաց : Տէրը քանի մը նշաններէ անոր կատաղութեան ինչ բանէ առաջ դալը իմանալով ուզեց Միֆօրի ձիակըրթարանը խաւրել :

Հոն հասնելով՝ առանձին ախոռ մը դրուեցաւ ուր որ առջի բերան հոն ալ նոյն բաները պատահեցան . ձիակըթարանին վարժիչները զինքը քալեցընելու տարին , բայց ամենեւին վիճակին վրայ փոփոխութիւն մը չեղաւ . եթէ չոր խոտ կամ վարսակ տային , ախորժով կուտէր՝ և ախորժով ալ կը խմէր , բայց միշտ անհանգստութիւն ու նեղսրտութիւն մը վրան կը տեսնուէր :

Ընկէ ուրիշ ախոռ մը տարին ուր կային ուրիշ ձիեր ալ . հոն երկայն ա-

տեն ամենեւին կատաղութեան նշան մը չտալէն ետև , կամաց կամաց նորէն իր առջի հանդարտութիւնը գտաւ , քու վի ձիուն վրայ գութ և սէր ձգելով :

Բայց ասկէ ալ հանելով ձիարձակարան մը տարին՝ ուր նորէն մինակ մնաց . ան պատճառաւ փախաւ հոնկէ ու վազելով կ'ուզէր ուրիշ ախոռ մը մտնել ուր որ այլ և այլ ձիեր կային : Արբոր նորէն իր տեղը դարձուցին , նեղսրտութեան ու կատաղութեան նշաններ սկըսաւ նորէն վրան ցուցընել : Բայց քանի մը օրէն սկսաւ կամաց կամաց հանդարտիլ . և կարծես թէ երբ ուրիշ ձի մը կը տեսնէր՝ կը զուարթանար : Ընգամ մը ճամբան երթալու ատեն այն ձիուն պատահեցաւ որուն քով կեցած էր հին ախոռին մէջ . մէկէն քովը վազեց , բայց անանկ կատաղութեամբ մը որ կարծեցին թէ խածնելու կ'երթար . երբոր մօտեցաւ՝ զուարթութեամբ մը քովը կեցաւ , լզեց և ուրիշ սիրոյ նշաններ ցոյց տալէն ետքը՝ երբ անիկայ իր ընթացքը առաջ տանելով հեռացաւ , ինքը տխրութեամբ կեցած կարծես թէ ամենեւին չէր ուզէր անկէ հեռանալ : Բայց բռնութեամբ նորէն զինքը ձիակըրթարանը խօթեցին , ու վերջապէս ուրիշ բանով չանցաւ իրեն այս հիւանդութիւնը , եթէ ոչ երևակայութիւնը հանդարտելով ու իրեն կիրքը մարելով , որով կրցան նորէն իր տիրոջը դարձընել :

Բարոյական ստածք :

Մարդուս անյագ կիրքերն ու յօժարութիւնները կը նմանին ան հոսանքներուն , որոնք որչափ լեցուին , այնչափ աւելի երագ կը վազեն , և որոնց ընթացքին արգելք չկրնար ըլլալ որ և իցէ թումբ :

Թէ կ'ուզես երջանիկ ըլլալ , նայէ քիչ բանի կարօտ ըլլաս , և ջանա միշտ կիրքերդ ու յօժարութիւններդ մեռած պահել :

